

ԸՍՏ ԳԵՌՐԳԻ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ՝ ՂԱՐԱԲԱՂԸ ԿՐՆԱՅ ԿՈՇՏԱՅՆԵԼ ԻՐ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Լեռնային Ղարաբաղի արտաքին գործոց նախարար Գեորգի Պետրոսեան Ստեփանակերտի մէջ, Արցախի Ազգային ժողովի պատգամաւորներու հարցերուն պատասխանելով՝ յայտնած է, թէ «Ցանկացած ժողովուրդ, որ սկսում է կազմակերպուել, որ սկսում է ստեղծել պետութիւն, ապա առաջնորդում է պետութեան եւ իր ժողովրդի շահերից: Այդ տեսակետից, այդ, շատ կարեւոր է՝ ինչ է գրուել Յայաստանում, բայց շատ աւելի կարեւոր է՝ ինչ է եղել անելու եւ ինչ է եղել ասելու մենք»:

Խորհրդարանական ժողովրդավարութիւն խմբակցութեան անդամները նախարար Պետրոսեանի հարց տուած են այն մասին, թէ՛ պաշտօնապէս գաղտնի համարուող «Մատրիտեան սկզբունքները որքանով թոյլ կը տան հասնել որեւէ համաձայնութեան, որը կը բաւարարի նաեւ Լեռնային Ղարաբաղի ժողովրդին»:

Ղարաբաղի արտաքին գործոց նախարարը, «Մատրիտեան սկզբունքների շուրջ ընթացող բանակցութիւնները» համարելով ընդամենը կոնսուլտացիա (խորհրդատուական-հմբ.)՝ ընդգծած է, թէ «Կայ կտրուկ անհամաձայնութիւն Ղարաբաղի կողմից այդ Մատրիտեան սկզբունքների վերաբերելով՝ մի քանի հիմնական կետերի վրայ, դրա մասին խօսուել է, ասուել է, որ Լեռնային Ղարաբաղի հանրապետութեան դիրքորոշումը ոչ մի կետով այսօրուան վիճակով չի փոխուել, կարող է պատահի, որ մենք մի քիչ էլ աւելի կոշտացնենք մեր դիրքորոշումները»:

Գեորգի Պետրոսեան նաեւ վստահեցուցած է, որ չի կրնար ըլլալ Ղարաբաղի հարցին հետ կապուած որեւէ որոշում, որուն մասին նախապէս ժողովուրդը իմացած չլլայ:

Ի պատասխան պատգամաւորներէն մէկուն հարցումին՝ «Յարաւոր է արդեօք, որ մի օր Յայաստանն ու Ատրպեյճանը համաձայնութեան գան կարգաւորման սկզբունքների շուրջ՝ առանց Ղարաբաղի մասնակցութեան, եւ եթէ այդ՝ ինչպիսի՞ք քայլեր կը ձեռնարկի Ղարաբաղի ղեկավարութիւնը», Պետրոսեան յայտնած է, որ վերջերս Ղարաբաղի նախագահ Բազո Սահակեանը ԵԱՀԿի Մինսքի խումբի համանախագահներէն պահանջած էր հանդիպում մը կազմակերպել Ատրպեյճանի եւ Ղարաբաղի ղեկավարներուն միջեւ: Գեորգի Պետրոսեանի ենթադրութեամբ, համանախագահները վերջերս չձայնակցելիս Ղարաբաղ, ինչպէս որ նախապէս յայտարարուած էր անոնց ժամանակացոյցով, որովհետեւ իրենց հետ պետք է պատասխան բերելիս:

«Շատ պարզ է, որ Ատրպեյճանը չի ուզում մասնակցել, բայց դա շատ բնական է իրենց համար եւ շատ անբնական է մեզ համար: Եւ սա մեր լծակներից մէկն է, որով մենք կարողանում ենք, կը կարողանանք եւ պետք է անենք, որ թէ՛ Յայաստանի հետ երկխոսութեան ժամանակ, թէ՛ համանախագահների եւ միջազգային տարբեր կառոյցների հետ, այդ հարցը որովի եւ պիտուի», ընդգծած է Ղարաբաղի արտաքին գործոց նախարարը:

ԼՂՀ Սահմանադրութեան մէջ ամրագրուած տարածքները օտարերկրեայ տարբեր պետութիւններու կողմէ խաղաղկաման առարկայ դարձնելու փորձերուն անդրադարձած է պատգամաւոր Վիտալի Բալասանեան, որ շեշտած է, թէ նման խաղաղով փորձ կ'ըլլայ անտեսելու եւ վտանգի տակ ղեկելու ԼՂՀ պետականութիւնը եւ ժողովուրդին անվտանգութիւնը:

«Զե՞ք կարծում, որ ժամանակն է ԼՂՀ իշխանութիւնները պատասխանատուութեան ենթարկելն նրանց, ընդհուպ՝ Յայաստանի հանրապետութեանը, որը հանդէս է գալիս որպէս բանակցային կողմ՝ առանց ԼՂՀ համաձայնութեան», հարց տուած է Բալասանեան Գեորգի Պետրոսեանին, միաժամանակ յիշեցնելով, որ՝ «Երբեք չի եղել գրաւոր համաձայնութիւն, որ ՀՀ հանդէս գալ ԼՂՀ-ի փոխարէն: Ընդհակառակը, ՀՀ պետք է ամեն ինչ անի, որ ԼՂՀ մասնակցի բանակցային գործընթացին՝ որպէս տուրք», նկատած է պատգամաւորը:

Ի պատասխան, Պետրոսեան նշած է, որ Յայաստանին պատասխանատուութեան ենթարկել փափաքողները պետք է հանդէս գան օրենսդրական նախաձեռնութեամբ: Եթէ նման օրէնք ընդունուի, ապա հնարաւոր կը դառնայ պատասխանատուութեան կանչել բոլոր անոնց, որոնք կը խօսին Ղարաբաղի անունով կամ չեն պաշտպաներ անոր շահերը:

ԼՂՀ արտաքին գործոց նախարար Գեորգի Պետրոսեանը, մեկնաբանելով հայ-թրքական համատեղ յայտարարութենէն տեղ, Մայիս եօթին, Յայաստանի եւ Ատրպեյճանի նախագահներուն միջեւ նախատեսուող հնարաւոր համաձայնութեան ձեռքբերումը՝ առանց ԼՂՀ կարծիքը հաշուի առնելու՝ նշած է, թէ Ղարաբաղը կը պահանջէ, որ բանակցութիւններու ձեւաչափը լիարժէք պահպանուի:

«Լիարժէք լինելու դէպքում, մենք կ'ունենանք հնարաւորութիւն մեր մտեցումները, մեր առաջարկները, մեր պահանջները ներկայացնելու», յայտնած է Գեորգի Պետրոսեան՝ ընդգծելով, որ հակառակ պարագային, անոնք Ղարաբաղի դիրքորոշման հակասող որեւէ փաստաթուղթի չեն ենթարկուի, զայն չեն ընդունի:

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ 6.1 ՏՈԿՈՍՈՎ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍԵԱԿԻՆ

Միացեալ Նահանգներու առեւտրի նախարարութիւնը հրապարակեց այս տարուան առաջին եռամսեակին ընթացքին երկրին տնտեսական գործունէութեան առնչուող առաջին տեղեկագիրը, որուն համաձայն, տնտեսութիւնը 6.11 տոկոսով նահանջ մը արձանագրած է, մինչ տնտեսագետներ 4.9 տոկոսի նահանջ մը կ'ակնկալէին: Անցեալ տարուան վերջին եռամսեակին տնտեսութիւնը 6.3 տոկոսով նահանջած էր:

Սակայն, տեղեկագրին մէջ կարգ մը դրական կետեր կային: Արդարեւ, հոն շեշտուած է, թէ քաղաքացիները 2.2 տոկոսով աւելի ծախսած էին, ինչ որ յատկանշական տուեալ մըն է, որովհետեւ տնտեսութեան 65-70 տոկոսը կախեալ է անկէ:

Նաեւ, ընկերութեանց թով մնացող ապրանքներուն ծաւալը գգալիօրէն նուազած է, ինչ որ կրնայ յանգել արտադրութեանց մղել զանոնք:

Haigazian University
Accepting Applications Now
Fall 2009 - 2010

- * Faculty of Business Administration & Economics (B.A./B.B.A./M.B.A.)
- * Faculty of Sciences (B.S.)
- * Faculty of Social & Behavior Sciences (B.A./M.A.)
- * Faculty of Humanities (B.A.)

Kantari, Beirut, admissions office:
01-349230/1, 01-353010/1/2
admissions@haigazian.edu.lb
www.haigazian.edu.lb

Կ'ՈՒԶՈՒՒ
Kodak Յաստատութիւնը կարիքը ունի electronic ուսանած երիտասարդի մը: Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել 03-286678 թիւին կամ CV-ն ուղարկել հետեւեալ e-mail-ին: kanekeur@dm.net.lb

ՄԱՆՎԱԿԱՆ

	Գնման Սակ	Վաճառման Սակ
Սուրիական թղթուկի	31,35	31,60
Քուէյթեան տիւնար	5125	5150
Յորդանանեան տիւնար	2100	2125
Պահրէյնեան տիւնար	3955	3980
Ս. Մ. Եմիրութեանց տիրիւմ	407	409
Քաթարեան դիւալ	410	412
Սեւտական դիւալ	398	400
Օմանեան դիւալ	3865	3890
Եգիպտական կիւն	270	280
Անգլիական սթրիլին	2210	2220
Չուիցերիական ֆրանք	1307	1317
Թրքական լիրա	925	935
Ճափոնական եէն	15,00	15,25
Ամերիկեան տոլար	1501	1514
Գանատական տոլար	1248	1258
Աւստրալիական տոլար	1088	1098
Եւրո	1975	1985

ՌՍԿԻ
Մէլ օսու սուկի 885 886
Մէլ օսու արծաթ 12,38 12,44

Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրո	1,3230	1,3235
Գանատական տոլար	1,1940	1,1945
Չուիցերիական ֆրանք	1,1405	1,1410
Ճափոնական եէն	98,75	98,80
Մէլ սթրիլին	1,4790	1,4795

Մէլ տոլար 371 դրամ (հայկական)

Սակարանը տրամադրեց լուսայափոխ
Ալեքսանեան Եղբայր Գեո՝ 01-252852

Ս.Գ.Հ.Կ. ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Ս.Գ.Հ.Կ. ընտրական կեդրոնական մարմինը կու գայ ձեռնարկեցնել, թէ յետ այսու իր Նոր Հաճնոյ եւ Անթիլիասի գրասենեակները բաց են ընդունելու եւ ստուգելու ձեռ ընտրական կարգավիճակը:

- Նոր Հաճնոյ գրասենեակ (01-444738) բաց է շաբթուան բոլոր օրերը ժամը 9:00-էն 8:00, Շաբաթ օրերը, ժամը 10:00-էն 5:00:
- Անթիլիասի գրասենեակ (04-522345) բաց է շաբթուան բոլոր օրերը ժամը 11:00-էն 4:00 բացի՝ Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

Ս.Գ.Հ.Կ. ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Ազգ. Ռուբինեան-Սահակ Մետրոպէան Վարժարան

ՏԱՐԵՎԱՆ ԴԱՇԿԵՐՈՅԹ

Կազմակերպութեամբ՝
Հոգաբարձութեան
Մասնակցութեամբ սիրուած երգիչ՝
ԿԱՐՕ ԿԱՊՈՒՏԱԿԵԱՆԻ

Նուագի ընկերակցութեամբ հանրածանօթ արուեստագետ
Խաչիկ Սալիսեանի

Տեղի կ'ունենայ Կիրակի, 10 Մայիս 2009, կէսօրուան ժամը 1:00-էն սկսեալ, «Նահր Ալ Ճաննա» ճաշարանին մէջ, Նահր Էլ Զէլպ:

ASHJIAN TOURS

Անհատաւոր գինով եւ բացառիկ յայտագիրով շրջապտոյտ դէպի Երեւան, 27 Յունիսէն 5 Յուլիս: Թրիքը՝ Հայէպէն, 4 աստղանի պանդոկ, ամէն օր նոր պտոյտներ, նախաճաշ եւ ընթրիք, ճաշկերոյթ-պարահանդէս, Հայէպ երթ ու դարձը շքեղ օթոթարով VIP, շատ սահմանափակ տեղեր: Գին՝ փոխան \$995 միայն \$895: Սոյն շրջապտոյտին կրնան մասնակցի սուրիաբնակները եւ յորդանանցիները:

17-25 Յուլիս՝ Թեհրան, Նոր Զուլա, Սպահան:
9-12 Մայիս դէպի Կիպրոս եւ Մակարա վանք շրջապտոյտ ուխտագնացութեան մնացած է միայն երկու տեղ, որ մը կ'յա Նափա, որ մը Նիկոսիա, որ մը ամբողջ Գալիսիա: Գիշեր մը պուզուքի, ընթրիքով փոխան՝ \$385, միայն \$250:
Գեո. 01-240654, 01-261177, 03-233978:

LOTTO 670-րդ վիճակագրութեան շահող թիւերը 30 Ապրիլ 2009

Կարգ	Բաշխում	Մրցանակներու ԸՆդ. Գումար	Շահող Անհատներ	Շահած պարգէներ
1	Գլխաւոր պարգէն՝ 6 թիւ	1.141.886.564	1	1.141.886.564
2	5 թիւեր առանց լրացուցիչ թիւ	--	--	--
3	5 թիւեր	51.479.618	31	1.660.633
4	4 թիւեր	51.479.618	1.208	42.616
5	3 թիւեր	120.384.000	20.064	6.000

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱՅՎԱՆՈՒԹԻՒՆ

30 ԱՊՐԻԼ 2009	15754	1.000.000 L.Ո.
7	5.000 L.Ո.	58245 1.000.000 L.Ո.
02	10.000 L.Ո.	21162 2.000.000 L.Ո.
741	20.000 L.Ո.	43724 2.000.000 L.Ո.
4161	40.000 L.Ո.	28423 4.000.000 L.Ո.
1692	40.000 L.Ո.	29836 4.000.000 L.Ո.
8012	100.000 L.Ո.	23576 8.000.000 L.Ո.
7231	100.000 L.Ո.	B 07510 120.000.000 L.Ո.
9318	200.000 L.Ո.	A 07510 12.000.000 L.Ո.
1833	300.000 L.Ո.	A 42069 60.000.000 L.Ո.
37788	1.000.000 L.Ո.	B 42069 6.000.000 L.Ո.

ՀՈԳԵԶԱՆԳԻՍ

ՂԱՄԱՍԿՈՍ Փերուզ Եագուպեան-Չաքալպաշեանի մահուան քառասուն քին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Ուրբաթ, 1 Մայիս 2009-ին, Ղամակոսի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ARARAD DAILY NEWSPAPER
Tel. - Fax: 01-56 55 99
P.O.Box: 175275 MAR MIKHAEL, BEIRUT - LEBANON
Website: www.araraddaily.org e-mail: ararad@terra.net.lb

صدر عن شركة ماسيس للطباعة والنشر (ش.م.م.)
المدير المسؤول: ابيسوغوم كريشيكيان

ԳՐԱԴՈՒԿՑ ՕՐ

15 Մայիս 2009,
Երեկոյեան ժամը 8:00-ին

ՀԱՅ ԱԲԵՏ. ԳՈՒԷՃԻ «ԾԻՐԱՆԻ»
ԵՐԳ.ՉԱԽՈՒՄԻՍԻԻ ՀԱՄԵՐԳ.

ԳՐԱԴՈՒԿՑ ՕՐ

Հ.Մ.Մ. ԱՆԹԻԼԻԱՍ
ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐ
22 Մայիս 2009,
ՄՏԵՐՄԻԿ ԵՐԵԿՈՅ

Մ Ա Ն Ա Զ Դ

Տիկին Անահիտ Տեմիրճեան (Լոնտոն)
Տեր եւ Տիկ Գեորգ Տեմիրճեան եւ զաւակուք (Լոնտոն)
Տիար Կարո Տեմիրճեան (Լոնտոն)
Տեր եւ Տիկին Արախան Աւագեան (Լոնտոն)
Տեր եւ Տիկին Արմէն Խանճիրեան (Հայէպ)
Տեր եւ Տիկին Իշխան Խանճիրեան եւ զաւակուք
Տեր եւ Տիկին Յակոբ Խանճիրեան եւ զաւակուք
Տեր եւ Տիկին Մարտիկ Խանճիրեան եւ զաւակուք
Տեր եւ Տիկին Սօ Թաղեան եւ զաւակուք
Տեր եւ Տիկին Արամ Թաղեան եւ զաւակուք

Եւ համայն ազգականներ կը գումար իրենց ամուսնոյն, հորեղբոր, մորեղբոր, քեռայրին, քենեկալին եւ հարազատին՝

ՀՐԱՅՐ ՏԵՄԻՐՃԵԱՆԻ
Ծնեալ՝ Կիպրոս

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի 21 Ապրիլ 2009-ին, Լոնտոնի մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Թաղման արարողութիւնը պիտի կատարուի Չորեքշաբթի 6 Մայիս 2009-ին, առաւօտեան ժամը 10:00-ին, Սուրբ Սարգիս եկեղեցւոյ մէջ: Ներկայիս ընդունիլ իբրեւ մահազոյ՝ Ցաւակցութիւնները պիտի ընդունուին Moran պանդոկին մէջ (Լոնտոն):

ԱՅՍՕՐ՝ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՉ

1 ՄԱՅԻՄ

- * 1707՝ Անգլիա, Ռուսիոյ եւ Սկոտլանդի միասնաբար կը յայտարարեն Մեծն Բրիտանիոյ Միացեալ Թագաւորութիւնը:
- * 1844՝ Մամուլէ Մորս կ'առաքէ առաջին հեռագիրը:
- * 1899՝ Պայեր ընկերութիւնը կը սկսի արտադրել «Ասփրին»-ը:
- * 1916՝ ծնաւ գանատացի դերասան Կլէմ Ֆորտը:
- * 1978՝ մահացաւ հայ մեծ երաժիշտ-օրիինդ Արամ Խաչատուրեանը: